Արձանագրություն N 2-3

ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/15 ՀՀ Շիրակի մարզի գ. Բերդաշենի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման մնացորդային աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան 05.09.2025թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Զարգարյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Նունյան
Ա. Աչոյան
Հ. Քանանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հակոբյան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ Ա. Խաչատրյանը

1. Գնման ընթացակարգի մասնակցի հայտի ուսումնասիրության մասին

(Հ. Զարգարյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեից, պաշտպանության նախարարությունից, ԿԳՄՍ նախարարությունից և Երևանի քաղաքապետարանից ստացված գրությունների համաձայն, գնման ընթացակարգի մասնակից «ՇԻՆ» ՍՊԸ և «Գառնի Շին» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/15 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 4 դեմ-0:

2. Գնման ընթացակարգի ընտրված մասնակցի վերաբերյալ

(Հ. Զարգարյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովի գնահատման թերթիկները՝ «ՇԻՆ» ՍՊԸ և «Գառնի Շին» ՍՊԸ կոնսորցիումի հայտը գնահատվել է բավարար:

2.2 ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել «ՇԻՆ» ՍՊԸ և «Գառնի Շին» ՍՊԸ կոնսորցիումին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշման վերաբերյալ

(Հ. Զարգարյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.2 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել ընտրված մասնակից «ՇԻՆ» ՍՊԸ և «Գառնի Շին» ՍՊԸ կոնսորցիումին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Հ. Զարգարյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ-0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ. Զարգարյան

Անդամ՝ ---------- Ս. Նունյան

---------- Ա. Աչոյան

---------- Հ. Քանանյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Գ. Հակոբյան